



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն  
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219  
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար  
**Էդուարդ Աղաջանյանին,**  
Պատճենը՝ վարչապետ **Նիկոլ Փաշինյանին**

HETQ.am-ի լրագրող **Տիրայր Մուրադյանից**  
(Էլ-փոստ tirayrmuradyan@gmail.com,  
հեռ.՝ 077 484-554)

Հարգելի պարոն Աղաջանյան, 05.12.2018 թ-ին Ձեզ հասցեագրածս հարցմանն ի պատասխան վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանը 12.12.2018 թ-ին ըստ էության մասնակի մերժել է հարցմամբ ակնկալվող տեղեկատվության տրամադրումը(Ա. Խաչատրյանի պատասխանը ներկայացված է կից):

Վարչապետի և փոխվարչապետերի աշխատասենյակների վերանորոգման, կահավորանքի վերաբերյալ հարցին ի պատասխան Ա. Խաչատրյանը նշել է. « «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետին և կառավարության 2018 թ-ի ապրիլի 5-ի 367 Ն գաղտնի որոշման համաձայն՝ ՀՀ վարչապետի, ՀՀ 2 փոխվարչապետերի, ինչպես նաև Բաղրամյան 26 հասցեում տեղակայված նախագահի աշխատասենյակների և հանգստի սենյակների մասին տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ»:

Բացի դա Ա. Խաչատրյանը տրամադրել է ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի և վարչապետի աշխատակազմի ղեկավար Է. Աղաջանյանի աշխատասենյակների գույքի վերաբերյալ տեղեկություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «*Պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվում են ազգային անվտանգության ապահովման, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմավթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները*»:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով աշխատասենյակների և հանգստի սենյակների գույքը, ինչպես նաև աշխատասենյակների նորոգման հարցը պետական գաղտնիք չեն կարող պարունակել:

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

պաշտոնատար անձինք են՝ **նախագահը, ԱԾ նախագարը և վարչապետը**: Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում փոխվարչապետերի մասին խոսք չկա:

Ինչ վերաբերվում է կառավարության 2018 թ-ի ապրիլի 5-ի 367 Ն գաղտնի որոշմանը, ապա այն պետական բյուջեի վերաբաշխման է վերաբերվում, որով, ընթացողում է, որ վերանորոգման աշխատանքներ են կատարվել վարչապետի աշխատասենյակում: Եվ այդ գաղտնի որոշումը չէր կարող տարածվել փոխվարչապետերի վրա, քանի որ կհակասեր վերև հիշատակած օրենքներին: Փոխվարչապետերը հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք չեն և հետևաբար նրանց առնչվող գնումները պետական գաղտնիք չեն կարող պարունակել:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Կառավարությունը կազմված է վարչապետից, առաջին փոխվարչապետից, երկու փոխվարչապետներից և նախարարներից»: Անհասկանալի է, թե ի՞նչ տրամաբանությամբ է Ա. Խաչատրյանը առանձնացրել և տրամադրել միայն փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի աշխատասենյակի գույքի մասին տեղեկություն և օրինակ՝ նրա փոխարեն չի ներկայացրել Արարատ Միրզոյանի կամ Տիգրան Ավինյանի աշխատասենյակի գույքի մասին տեղեկություն:

Քանի որ առաջին հարցմանս սպառիչ և ամբողջական պատասխան չի տրվել, համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել այս հարցերի պատասխանները:

1. Վարչապետի, փոխվարչապետերի աշխատասենյակների, հանգստի սենյակների գույքը ե՞րբ է ձեռք բերվել
- 1.1 Որքա՞ն է արժեքը
- 1.2 Գույքը ներառվա՞ծ է կառավարության հաշվեկշռում, թե՞ ոչ: Եթե ներառված է, ապա առնձին-առնձին նշե՞ք, թե ինչ գույք կա հանգստի և աշխատանքային սենյակներում (օրինակ՝ 6 հատ աթոռ, 3 սեղան և այլն)

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել **Էլեկտրոնային** տարբերակով:

(Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Հարգանքով՝



Տիրայր Մուրադյան

13 դեկտեմբերի 2018 թ.